

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Սույն թվականի հուլիսի 20-ին Հայաստանի Հանրապետության Բարձրագույն դատական խորհուրդը հրապարակել էր հայտարարություն՝ Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի կազմման վերաբերյալ:

Դիմումների ներկայացման վերջնաժամկետ էր սահմանվել սույն թվականի օգոստոսի 3-ը ներառյալ:

03.08.2018թ. ժամը 18.00-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնում ընդգրկվելու մասին Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացվել թվով 4 դիմում:

N	Ազգանուն, անուն	Զբաղեցրած պաշտոն
1.	Աբգարյան Լուսինե	ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր
2.	Գրիգորյան Տաթևիկ	Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր
3.	Զաքինյան Զոյա	ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր
4.	Վարդանյան Արշակ	Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր